Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

Հետազոտական աշխատանք

Դպրոց՝ Սիսիանի հ 2 հիմն. դպրոց

Թեմա՝ Միջառարկայական կապերի հաստատումը

«կենսաբանություն» առարկայի դասավանդման ընթացքում

Վերապատրաստող, մենթոր՝ Արմինե Մեծրիցյան

Ուսուցչի օգնական՝ Հեղինե Ապրեսյան

Սիսիան 2023թ

Բովանդակություն

Ներածություն – էջ 3

Միջառարկայական կապերի հաստատումը «կենսաբանություն» առարկայի դասավանդման ընթացքում – էջ 5

Ուսուցչի օգնականի դերը «կենսաբանություն» առարկայի դասավանդման ընթացքում – էջ 15

Դասի պլանի օրինակ – էջ 17

Եզրակացություն – էջ 20

Օգտագործված գրականություն – էջ 23

Ներածություն

Դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկա աշակերտի համար դառնում է ավելի գրավիչ, եթե այն սերտորեն կապվում է բնության, շրջապատող աշխարհի և հասարակական կյանքի հետ: Ցանկացած ուսումնական առարկայի, այդ թվում նաև կենսաբանության ուսուցման նպատակը անհատի ձևավորումն է, նրա որակների, հայացքների, սկզբունքների, վարքի նորմերի, որոնք համապատասխանում են համամարդկային չափանիշներին: Դրա համար ուսուցիչը ոչ թե գիտելիքների ուղղակի փոխանցող է, այլ աշակերտների անհատական որակների ձևավորող: ՈՒսուցման կրթական կողմը կապված է գիտելիքների ծավալի հետ, զարգացնող կողմը՝ կառուցվածքի բարդացման հետ, դաստիարակող կողմը՝ դրանց նկատմամբ վերաբերմունքի հետ: Եվ ուսուցման գործընթացը համակողմանի դարձնելու համար կիրառվում են միջառարկայական կապեր: Միջառարկայական կապերի ստեղծումը, ասել է թե՝ ինտեգրումը, միավորում է մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցում մեկ ընդհանուր երևույթ, թեմա կամ հասկացություն ուսումնասիրելիս: Ինտեգրումը հնարավորություն է տալիս լուծելու մի քանի խնդիրներ, որոնք դժվար է իրականացնել ավանդական մոտեցումների շրջանակներում: Գոյություն ունեն միջառարկայական կապերի հիման վրա ուսուցման բազմաթիվ տեսակներ, որոնք կապում են հմտություններն ու գիտելիքները, ինչն էլ հնարավորություն է տալիս նյութերի ճիշտ և հեշտ հասկանալուն, դասավանդման, կրթության և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Թեմայի արդիականությունը - Դասապրոցեսի ընթացքում միջառարկայական կապերի ստեղծումը կրթության և ուսուցման գործընթացները դարձնում են ավելի արդյունավետ, նպաստում են սովորողների մոտ հետաքրքրության բարձրացմանը, հմտությունների, կարողությունների, աշխարհայացքի ընդլայնմանը, զարգացնում են տրամաբանական մտածողությունը և ստեղծագործական ունակությունները: Միջառարկայական կապերի իրագործումը հնարավորություն է տալիս խնայել ժամանակը,

սովորողների ընդհանուր ուսումնական կարողությունների և հմտությունների ձևավորման համար ստեղծել նպաստավոր պայմաններ: Հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան՝ այսօր մեծանում է բնագիտամաթեմատիկական, հումանիտար առարկաների միջև կապերի բացահայտման դերն ու նշանակությունը: Նոր պահանջներ են առաջադրվել կրթության կազմակերպման եղանակներին, մեթոդներին, ձևերին ու բովանդակությանը: Ուսուցումը հենվելով առարկայական ուսուցման՝ դարերով մշակված և կատարելագործված ուսումնական ծրագրերի կազմման սկզբունքների վրա, անհրաժեշտ է համարել ինտեգրել, ամրապնդել, ընդլայնել տարբեր առարկաների փոխադարձ կապը, որի ամբողջական ճանաչողությունը ենթադրում է համապատասխան գիտելիքների միավորում: Գիտելիքների միավորումը հիմնական ուղի է իմացության մեջ, քանի որ դրանով ապահովվում է իրականության, երևույթների նկատմամբ համակարգային մոտեցման դրսևորումը:

Հետազոտական աշխատանքի խնդիրները

Ժամանակակից կրթության կարևորագույն խնդիրներից է ցույց տալ աշակերտներին շրջապատող աշխարհի միասնականությունը, և նրանց մոտ շրջապատող աշխարհի ամբողջական պատկերի ձևավորման համար նպատակահարմար է կիրառել միջառարկայական կապեր, որոնց օգնությամբ աշակերտները սովորում են տեսնել նմանատիպ օրենքներ և օրինաչափություններ այս կամ այն գործընթացում կամ երևույթում, կենսաբանության դասին միջառարկայական կապերի օգնությամբ իրականացնել անհատական ուսուցում՝ ուսուցչին հնարավորություն տալով հիմնվելու սովորողների նախասիրությունների և հետաքրքրությունների որոշակի շրջանակի վրա:

Հետազոտության նպատակները.

Հիմնվելով մեթոդական,մանկավարժական և հոգեբանական գրականության վերլուծության վրա՝ միջառարկայական կապերի կիրառմամբ աշակերտների համար հնարավորություն ստեղծել կրկնել այլ առարկաներից ստացած գիտելիքները, տեղեկությունները, նպաստել հաղորդման նյութի խոր և բազմակողմանի ընկալմանը, մշակել դասընթացի բովանդակությունը միջառարկայական մոտեցման հիման վրա դասավանդելու օրինակով:

Միջառարկայական կապերի հաստատումը

«կենսաբանություն» առարկայի դասավանդման ընթացքում

Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով՝ նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»: Միջառարկայական մոտեցումը լուծում է կրթության առարկայական համակարգում առկա հակասությունը առարկաներում ցրված աշակերտների կողմից գիտելիքների յուրացման և դրանց սինթեզի, գործնականում, աշխատանքի և մարդու կյանքում ինտեգրված կիրառման անհրաժեշտության միջև: Գիտելիքը ինտեգրված կերպով կիրառելու, այն սինթեզելու, գաղափարներն ու մեթոդները մի գիտությունից մյուսը փոխանցելու կարողությունը հիմնված է գիտական և տեխնոլոգիական առաջընթացի, ժամանակակից պայմաններում մարդու գործունեության, ստեղծագործական մոտեցման հիմքում: Նման հմտություններով զինվելը միջնակարգ և բարձրագույն կրթության հրատապ խնդիր է, որը թելադրված է գիտության մեջ ինտեգրման միտումներով և լուծվում է միջառարկայական մոտեցման միջոցով:

Կենսաբանության դասերին կիրառվող միջառարկայական կապերն ունեն մի շարք գործառույթներ, որոնցից հիմնականները հետևյալն են.

1. Մեթոդական – Հնարավորություն է տալիս աշակերտների բնավորության մասին պատկերացումների ձևավորմանը:
2. Ուսումնական – Միջառարկայական կապերի միջոցով ուսուցիչը կարող է աշակերտի մոտ ձևավորել այնպիսի որակներ, ինչպիսիք են հետևողականությունը, տեղեկացվածությունը, մտքի ճկունությունը և այլն: Այս կապերը որոշում են

կենսաբանական և ընդհանուր բնագիտական հասկացությունների հարաբերակցությունը:

3. Զարգացող – Այս գործառույթը նպաստում է աշակերտի ստեղծագործական մտքի բարելավմանը, նրանց ճանաչողական գործունեության ձևավորմանը, ինքնուրույնությանը, հետաքրքրությանը: Այս գործառույթն է հնարավորություն տալիս հաղթահարել, այսպես կոչված, առարկայական մտածողության իներտությունը և ընդլայնել աշակերտների մտահորիզոնը:
4. Կրթական –Ուսուցչուհին միջառարկայական կապերի ստեղծման հիման վրա ցուցաբերում է կրթության ինտեգրված մոտեցում:
5. Ձևավորող – Այս գործառույթը իր մեջ ներառում է ուսուցման կազմակերպման մեթոդներն ու եղանակները, դասի պլանավորումը:

Կենսաբանությունը ինքնին համալիր գիտություն է, քանի որ իր մեջ ներառում է մի քանի ինքնուրույն գիտություններ՝ բուսաբանություն, կենդանաբանություն, մարդու անատոմիա և այլն: Կենսաբանությունը նաև ինտեգրված առարկա է՝ հարուստ միջառարկայական կապերով:



Վերը գծագրված սխեման արտացոլում է բազմաթիվ միջառարկայական կապերով դրսևորվող ինտեգրված դասերի թեմաների մի քանի օրինակներ։

Կենսաբանության դասերը հարուստ են միջառարկայական կապերի իրագործման առումով և այդպիսի կապերի ռեալիզացման օրինակ կարող են հանդիսանալ կենսաբանության և երաժշտության միջև առկա ընդհանրությունները։

Երաժշտությունը կարող է ակտիվ միջոց հանդիսանալ աշակերտների համար կենսաբանության ուսումնասիրության պարագայում։ Երաժշտությունը հանդիսանում է դաստիարակության հզոր միջոց, այն ունի հուզական ազդեցության մեծ ուժ, դաստիարակում է մարդուն, ձևավորում է ճաշակ։ Այն պետք է հնչի ոչ միայն երաժշտության դասաժամերին, այլ նաև բնագիտական և հումանիտար առարկաների դասաժամերին։ Կ. Դ. Ուշինսկին գտնում էր, որ բնության երևույթները սնունդ են հանդիսանում աշակերտների մտքի և երևակայության համար։ Ինչպես բնությունը, այնպես էլ երաժշտությունը ունեն ազդեցության անսահման լայն սպեկտր։

Շատ կոմպոզիտորներ և երաժիշտներ իրենց ստեղծագործություններում արտահայտել են հենց բնությունից ստացած զգացողությունները։

Կենսաբանության ուսումնասիրության գործընթացում գեղագիտական կրթությունը կապված է սովորողի գեղարվեստական զարգացման հետ և կարող է արդյունավետ իրականացվել կենսաբանության և հումանիտար առարկաների միջառարկայական կապերի միջոցով։

Երաժշտարվեստը սովորողների կյանքում մեծ դեր ունի։ Դեռահասության շրջանում, երբ ձևավորվում է նրանց բնավորությունը, աշխարհայացքը, երաժշտությունը ազդում է ոչ միայն սովորելու էթիկայի վրա, այլ նաև խորացնում է ունեցած գիտելիքները։ Կենսաբանության ուսուցիչը երաժշտության միջոցով կարող է ավելի տպավորիչ դարձնել բույսերի, կենդանիների ընդհանուր կառուցվածքը, մարդու անատոմիական և ֆիզիոլոգիական կառուցվածքը, օրգանիզմների և շրջակա միջավայրի փոխադարձ կապերը։

Երաժշտության օգտագործման մեթոդիկան «բուսաբանություն» բաժնի ուսուցման ժամանակ։ Բնության մասին շատ ստեղծագործություններ շատ տպավորիչ են իրենց ճշգրիտ բնութագրով, հնչյունային առատությամբ, հուզականությամբ, որոնք ակտիվացնում են սովորողների երևակայությունը։

Օրինակ՝ Վիվալդիի <<Տարվա եղանակները>> ստեղծագործությունը լսելը օգնում է ավելի պատկերավոր ընկալել եղանակին բնորոշ փոփոխությունները և նպաստում ավելի հեշտ հիշելուն։ Երաժշտության միջոցով մարմնավորված բնական երևույթները

խրախուսում են սովորողին հասկանալ մարդու կյանքում գեղագիտական և բարոյական արժեքների կարևորության մասին։ Իհարկե, այս գործընթացում մեծ և կարևոր դեր ունի ուսուցիչը, ով օգնում է ճիշտ ընկալել և գնահատել շրջակա միջավայրի ներդաշնակ կառուցվածքը։

Այսպիսով՝ երաժշտությունը ճանաչողական կարևոր միջոց է , որը ակտիվացնում է սովորողի մտավոր զարգացումը, բարոյական ու գեղագիտական դաստիարակությունը։

Բուսաբանության բաժնի դասընթացում տերևների թեման անցնելիս սովորողը պատկերացում է կազմում տերևի կառուցվածքի, տեսակների, ֆունկցիաների, նյութափոխանակության, նրանց նշանակության, նրանցում կատարվող սեզոնային փոփոխությունների մասին։ Այս դասաժամերին ուսուցիչը կարող է ցուցադրել սենյակային բույսեր, տարբեր տիպի և տեսակի տերևների նմուշ-օրինակներ (աղեղնաջիղ-եզան լեզու, զուգահեռաջիղ-եգիպտացորոն, թաթաձև -խաղողի և այլ տերևներ)։



Թեմայի ուսումնասիրության ժամանակ կարելի է ցուցադրել նաև Ի. Լևիտինի <<Ոսկե աշուն>>, Գ. Բաշինջաղյանի<<Աշուն>> և Մ. Սարյանի <<Աշուն>> կտավները։

Գ. Բաշինջաղյան Ի. Լևիտինի

Մ. Սարյան

Ծաղկավոր բույսերի բաժնի ուսուցման ընթացքում վարդազգիների թեման ուսումնասիրվում է խնձորի օրինակով: Դասաժամին կարելի է լսել Ա. Հեքիմյանի <<Яблонька>> երգը: <<Բույսերը և շրջակա միջավայրը>> թեման կարելի է սկսել Բեթովենի <<Լուսնի սոնատը>> լսելով: Երաժշտության ֆոնին ուսուցիչը կարող է ներկայացնել Սոխոմլինսկու խոսքերը. << Աշխարհում կան երկրներ ավելի պայծառ, քան մեր դաշտերն ու մարգագետիներն են, բայց հայրենի գեղեցկությունը պետք է լինի ամենաթանկը մեզ համար>> և շարունակել գեղեցիկ բնութագրով՝ ներկայացնելով հայրենի բնությունը, մեջբերելով նաև Հ. Շիրազի <<Գարնանամուտ>> բանաստեղծությունից մի հատված.

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,

Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,

Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք,-
Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձյունաթույր,
Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին
Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաբույր։

Գիտնականները ապացուցել են, որ բույսերը դասական երաժշտություն լսելիս ավելի լավ և արագ են աճում։

Երաժշտության օգտագործման մեթոդիկան «կենդանաբանություն» բաժնի ուսուցման ժամանակ։ «Կենդանաբանության» բաժնի ուսուցման ժամանակ սովորողները ուսումնասիրում են կենդանիների մորֆոլոգիան, անատոմիան, ֆիզիոլոգիան, կենդանիների էվոլուցիան, բազմազանությունը և նրանց ազդեցությունը բնության մեջ և մարդու կյանքում։ Ուսումնասիրության ընթացքում ճանաչողական գործընթացները տպավորիչ դարձնելու էմոցիոնալ պահանջները բավարարելու համար կարելի է օգտագործել կենդանիների, թռչունների ձայների իմիտացիայով երաժշտական ստեղծագործություններ։ Ամենաբնական երգիչները համարվում են թռչունները, որոնց արձակած ձայները չեն համեմատվում ոչ մի այլ կենդանու արձակած ձայների հետ։ Թռչունների ձայների իմիտացիա մարդիկ ստեղծել են դեռևս հին ժամանակներից։ Շատ կոմպոզիտորների ստեղծագործություններ նվիրված են թռչուններինէ։ Կ. Դակեն «Ласточка», Ֆ. Ռամո «Соловей-победитель» և այլն։ Տարբեր դասերի ֆոնային երաժշտության օրինակ կարող է ծառայել Լեո Ռոջասի «Կոնդորայի թռիչքը» https://youtu.be/8kQZHYbZkLs, Գենադի Տկաչենկոյի «Բնության ձայներ» https://youtu.be/M0ZUez6udnE, գործիքային երաժշտություն՝ «Բնության ձայներ» https://youtu.be/5lCRsLjMeso: Կարելի է ունկնդրել և դիտել Պ. Ի.Չայկովսկու «Лебединое озеро» բալետից «Փոքրիկ կարապների պարը» հատվածը՝https://youtu.be/rDdcw_p3eJg: Սեզոնային չվող թռչունների դասն անցնելիս կարելի է ունկնդրել Ռ. Մաթևոսյանի կատարմամբ

«Բարի արագիլ» երգը՝ https://youtu.be/pHFhyYZotF4՝ խոսք՝ Աշոտ Գրաշ, երաժ.՝ Ա.Հեքիմյան։ Թռչունների էկոլոգիական խմբերը ուսումնասիրելիս ուսուցիչը ներկայացնում է թռչունների բազմազնությունը, կտուցների տեսակների առանձնահատկությունները՝ կապված սնման եղանակի հետ, և կարող է ցուցադրել համապատասխան նկարներ, որն էլ կարող է ուղեկցվել երաժշտությամբ։





բաժինն



Միջատների

ուսումնասիրելիս դասին կարելի է օգտագործել հանելուկներ, ցուցադրել տարատեսակ միջատների նկարներ՝ ընդգծելով ընդհանրությունները և տարբերությունները, իսկ որպես ֆոնային երաժշտություն օգտագործել Ա. Ռիմսկի-Կորսակովի «Իշամեղվի թռիչքը» երաժշտությունը՝ https://youtu.be/O-Xg6dWWMXk:

Իսկ դասական երաժշտություն սիրում ենք ոչ միայն մենք, այլ նաև ծովային կաթնասուններից դելֆինները:

Երաժշտության օգտագործման մեթոդիկան «Մարդու անատոմիան» բաժնի ուսուցման ժամանակ: Երաժշտությունը միշտ մեծ դեր է ունեցել մարդու կյանքում: Երաժշտությունը զարգացնում է մարդու միտքը, կարողությունները և ինտելեկտը, լավացնում է հիշողությունը: Մեր մկանները, նյարդային համակարգը ընդունակ են ընկալելու ռիթմը: Երաժշտությունը՝ որպես ռիթմիկ գրգռիչ, խթանում է շարժողական և վեգետատիվ ոլորտներում օրգանիզմի ֆիզիոլոգիական, բիոքիմիական գործընթացները: Հաճելի երաժշտություն լսելիս ուղեղն արտադրում է դոպամին հորմոնը ($C_8H_{11}NO_2$), որն էլ մեզ մոտ առաջացնում է հաճելի զգացողություններ, իսկ այդ զգացողությունների հետ ասոցացվող ինֆորմացիան չի մոռացվում: Երաժշտությունը մարդուն հանգստացնող, իսկ երբեմն էլ բուժող միջոց է:

Շոստակովիչի «Վալս»-ը լսելը https://youtu.be/sgMaykdYrF0 նպաստում է ընդհանուր զգացողության լավացմանը: Մենդելսոնի «Հարսանեկան մարշ»-ը https://youtu.be/YV85iw1w8WM օգնում է կարգավորել արյան ճնշումը և սրտի աշխատանքը: Օգինսկու «Պոլոնեզ»-ը https://youtu.be/6C8srmWXlys հանգստացնում է գլխացավը, Մոցարտի երաժշտությունը նպաստում է երեխաների մտավոր զարգացմանը: Չայկովսկու «Ծաղիկների վալս»-ը https://youtu.be/9a4DnEWXMHM հանգստացնում է ստամոքսի խոցային հիվանդությունների ժամանակ առաջացած ցավերը: Երաժշտական գործիքները նույնպես ունեն որոշակի ազդեցություն օրգանիմի վրա: Օրինակ՝ կիթառը դրական ազդեցություն ունի սրտի, դոմրան՝ լյարդի, շեփորը՝ աղիների կենսագործունեության վրա:





Երաժշտություն լսելը մեր օրգանիզմի կենսաբանական պահանջն է: Ստորև կներկայացնեմ ինտեգրված համագործակցային դասի մեկ օրինակ՝ միջառարկայական կապերի դրսևորմամբ, որտեղ մեծ դեր ունի նաև ուսուցչի օգնականը:

Ուսուցչի օգնականի դերը «կենսաբանություն» առարկայի դասավանդման ընթացքում:

Ուսուցչի օգնականը կրթության կազմակերպման գործընթացում ուսուցչին աջակցող մանկավարժական աշխատող է: Ուսուցչի օգնականի աշխատանքն ուղղված է աշակերտներին ուշադրության կենտրոնում պահելու և ուսուցմանն օժանդակելու համար, սովորողների՝ որպես սովորական և առանձնահատուկ երեխաների տարբերակումը վերացնելուն՝ ելնելով այն հանգամանքից, որ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում, և բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին: Ավանդական դասի ընթացքում գործում է ուսուցիչ-աշակերտ կապը, իսկ կարողունակություններին ուղղված դասի ընթացքում ուսումնական նյութը կառուցված է առանցքային կարողունակությունների և գաղափարների շուրջ: ՀՀ-ում հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի օգնականը, ուսուցիչների հետ համագործակցելով, իրականացնում է սովորողների կատարողականության դիտարկում և այս կամ այն պատճառով առաջացած դժվարությունների վերհանում: Ուսուցչի օգնականներն առանցքային դեր ունեն սովորողների ուսումնական գործընթացում և կյանքում: Նրանք աջակցում են սովորողներին՝ հաղթահարելու համար ուսումնառության ընթացքում առաջացած դժվարությունները: Ուսուցչի օգնականը կարող է կապող օղակ հանդիսանալ երեխայի և նոր միջավայրի միջև՝ օգնելով նրան հարմարվել նոր միջավայրին՝ նրա շուրջ կառուցելով հարմարավետ կրթական միջավայր, ձևավորելով համագործակցային հարաբերություններ՝ ինչպես սովորողի և հասակակիցների, այնպես էլ՝ սովորողի և ուսումնական գործընթացի այլ մասնակիցների միջև: Այս պարագայում ուսուցչի օգնականի համար ամենակարևոր գործոններից մեկն է տեղեկացված լինել սովորողի առողջական խնդիրների, զարգացման առանձնահատկությունների և հնարավորությունների, ուսումնական դժվարությունների և ձեռքբերումների մասին, քանի որ նրա գործունեության արդյունավետությունը կախված է դրանից: (2, էջ 19)

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի գործունեությունն իր մեջ ներառում է առաջադրանքների ահռելի շրջանակ, որի հիմնական նպատակը սովորողների

կողմից հանրակրթության պետական չափորոշիչների պահանջներին համապատասխան գիտելիքների յուրացման և ուսուցման բարձր որակի ապահովումն է:

Դպրոցներում ուսուցչի օգնականի պարտականություններն են.

● օգնել ուսուցիչներին դասը պլանավորելու, դասավանդելու հարցում,

● աջակցել ԱՈՒՊ-ի իրականացմանը,

● աջակցել առարկայական ուսուցիչներին պատշաճ մեթոդներ և տեխնիկաներ կիրառելու հարցում,

● կատարել դասարանի և առանձին աշակերտների գնահատում և տվյալների վերլուծություն,

● օգնել ուսուցիչներին պատրաստելու դասավանդման նյութերը բոլոր աշակերտների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների համար,

● մասնակցել դասի նախապատրաստման աշխատանքներին,

● ուսուցիչների հետ միասին հիմնավորել, գնահատել և դիտարկել առանձին երեխաների ուսումնառության գործընթացի դժվարությունները,

● նպաստել աշակերտների ինքնուրույնության զարգացմանը,

● պաշտպանել աշակերտների իրավունքներն ու ազատությունը,

● համագործակցել բազմամասնագիտական թիմի հետ,

● մասնակցել առարկայական խմբերի մեթոդական քննարկումներին,

● մասնակցել սոցիալական ծառայությունների կողմից վերհանված դեպքերի ներկայացմանն ու քննարկումներին: (1, էջ 11)

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի օգնականի՝ որպես մանկավարժական աշխատողի հիմնական դերն է իր գործունեությամբ խթանել յուրաքանչյուր սովորողի ակտիվ մասնակցությունը կրթական գործընթացին՝ դրանով իսկ նպաստելով տվյալ հաստատությունում լավագույն ներառական կրթական համակարգի կայացմանը: Նրա կողմից իրականացված աշխատանքները կարող են որոշիչ լինել սովորողի ուսումնառության գործընթացում՝ ինքնուրույն սովորելու կարողության ձևավորման և զարգացման, ուսումնական նյութի յուրացման, դպրոցում և դասարանում ներառման գործընթացում: Հանդիսանալով ուսումնական հաստատությունում կարևոր

դերակատարում ունեցող մանկավարժական աշխատող՝ նա աջակցում և լրացնում է ուսուցչին սովորողների որակյալ կրթության ապահովման գործընթացում ինչպես դասարանում, այնպես էլ արտադասարանական միջոցառումների ընթացքում, խթանում է սովորողների կրթական և սոցիալական զարգացումը:(2, էջ17)

Դասի նախապատրաստման, կազմակերպման և իրականացման գործընթացները կատարել եմ ուսուցչի հետ համատեղ: Պատրաստել եմ օժանդակ նյութերը, աջակցել եմ դասարանի կազմակերպմանը և դասապրոցեսի իրականացմանը: Կենսաբանության ուսուցիչը ներկայացրեց աշակերտների զարգացման առանձնահատկությունների և հնարավորությունների, ուսումնական դժվարությունների և ձեռքբերումների մասին, քանի որ իմ հետագա գործունեությունը կախված է դրանից: Համատեղ մշակեցինք համապատասխան մեթոդներ, պատրաստեցինք ուսումնաօժանդակ նյութեր՝ հաշվի առնելով բոլոր աշակերտների կարողությունները: Որոշեցինք դասապրոցեսում յուրաքանչյուրիս աշխատանքը: Այդ ընթացքում իմ աշխատանքը կնպաստի բոլոր սովորողների ներառմանը, ուսումնառության ընթացքում նրանց ակտիվության, մասնակցության, ինքնուրույնության բարձրացմանը, կաջակցեմ ուսուցչի կողմից տրված հանձնարարությունների կատարմանը:

Դասի պլան

Առարկա՝ Կենսաբանություն

Դասարան՝ VIII

Դասի թեման՝ Լսողական վերլուծիչ

Դասի տեսակը՝ Ինտեգրված (կենսաբանություն, ֆիզիկա, երաժշտություն)

Դասի տիպը՝ Համատեղ դասավանդում

Անհրաժեշտ նյութերը՝ Համակարգիչ, դասագրքեր, տեսանյութեր, տեսացրիչ,

սահիկաշար, քսիլոֆոն, կամերտոն, խաղալիքներ։

Դասի նպատակը՝

Ուսուցանող- Ցույց տալ կենսաբանության, ֆիզիկայի և երաժշտության միջև կապը, սովորողներին ծանոթացնել լսողական վերլուծիչի կառուցվածքին, ձայնի, երաժշտությունների տեսակներին, և օրգանիզմի վրա նրանց ազդեցության հետ։

Զարգացնող- Զարգացնել տրամաբանական մտածողությունը, ստեղծագործական կարողությունը, ինքնուրույնությունը։

Դաստիարակող- Հետաքրքրություն առաջացնել դասավանդվող առարկայի նկատմամբ, բարձրացնել աշխարհի գեղագիտական ընկալման նշանակությանը։

Ակադեմիական- Կիմանան լսողական վերլուծիչի կառուցվածքը, ձայնի առաջացման և ընկալման սկզբունքը, կկարողանան ամրապնդել գիտելիքները թեմայի շուրջ։

Սոցիալական- Աշակերտի մոտ ձևավորել համագործակցելու, լսելու, միմյանց օգնելու կարողություններ, զարգացնել անհատական, համագործակցային և խմբային աշխատանքային հմտությունները, ձևավորել գիտական աշխարհայացք։

Դասը սկսելիս 1-2 րոպե կազմակերպչական աշխատանքները կատարելուց հետո խթանման փուլում մտագրոհ կազմակերպելու համար ուսուցչի օգնականը միացնում է դաշնամուրային երաժշտություն և աշակերտներին հանձնարարում լսել այն, փորձել գուշակել դասի թեման և կիսվել երաժշտությունից ստացած տպավորություններով։ Կարճ քննարկումից հետո երաժշտության ուսուցիչը նկարագրում է երաժշտական գործիքը և տվյալ ստեղծագործությունը։ Այնուհետև ուսուցչի օգնականը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու համար ցուցադրում է տարբեր ձայներ արձակող խաղալիքներ և բացատրում, որ մարդուն ամբողջ կյանքում ուղեկցում են տարատեսակ ձայներ՝ սկզբից՝ մայրիկի, հայրիկի, հետո՝ խաղալիքների, շրջապատող մարդկանց, բնության, իսկ ավելի հասուն տարիքում՝ նաև երաժշտությունը։ Ֆիզիկայի ուսուցիչը

ներկայացնում է ձայնի առաջացման սկզբունքը (երկաթե քանոնի և կամերտոնի միջոցով), բացատրում է ձայնային ալիքի հաղորդման սկզբունքը: Երաժշտության ուսուցիչը քսիլոֆոնի միջոցով ցույց է տալիս ձայնի առաջացումը: Կենսաբանության ուսուցիչը ներկայացնում է լսողական վերլուծիչի կառուցվածքը և ձայնի ընկալման, հաղորդման սկզբունքը: Զուգահեռներ է տանում այլ կենդանիների ականջախեցու կառուցվածքի և ձայնի ընկալման առանձնահատկությունների վերաբերյալ: Մարդն ընդունակ է լսել 16 հց հաճախականության ձայներ, իսկ որոշ կենդանիներ՝ 16 հց-ից ցածր հաճախականության ձայներ, իսկ աշակերտները նշում են այդ կենդանիներին: Այդ ընթացքում ուսուցչի օգնականը ցուցադրում է համապատասխան տեսասահիկը: Ֆիզիկայի ուսուցիչը ներկայացնում է տարբեր միջավայրերում և տարբեր ջերմաստիճաններում ձայնի արագության վերաբերյալ տեղեկույթ, իսկ աշակերտները դիտարկելով ընկալում են ձայնի արագության կախվածությունը այդ գործոններից: Երաժշտության ուսուցչը ներկայացնում է ձայնի տոնայնության, բարձրության, տեմբրի մասին ինֆորմացիա, իսկ աշակերտները դրա հիման վրա բնութագրում և համեմատում են կնոջ ու տղամարդու ձայները: Կենսաբանության ուսուցիչը բացատրում է, թե ինչպես է ձայնի բարձրությունը ազդում օրգանիզմի վրա:

Սովորական խոսք – 60 դբ

Բարձր խոսք – 80 դբ՝ վտանգավոր

Բարձր երաժշտություն – 110 դբ

Ինքնաթիռի ձայն – 120 դբ՝ ցավոտ

Գերձայնային զենք – 200 դբ՝ մահացու:

Բարձր ձայնն առաջացնում է ոչ միայն լսողական օրգանի աշխատանքի խախտումներ, այլ նաև բարձրացնում է արյան ճնշումը, արագացնում է սրտի աշխատանքը, խանգարվում է նյարդային համակարգի աշխատանքը:

Որպեսզի այս ամենում աշակերտները համոզվեն, ուսուցչի օգնականը կատարում է փորձ։ Աշակերտներից մեկին կանչում է գրատախտակի մոտ, չափում է արյան ճնշումը և սրտի զարկերը, այնուհետև նույնը կատարում է դասական, փոփ և ռոք երաժշտություններ լսելուց հետո։ Աշակերտները տվյալները հավաքագրում, վերլուծում են ու պատկերացում են կազմում ձայնի բարձրության և ազդեցության կապի մասին։

Ամրապնդման համար կատարում ենք կարճ հարցում.

1. Ի՞նչը կարող է ձայնի աղբյուր լինել (տատանվող մարմին)
2. Ի՞նչն է ձայնի հաղորդման միջոցը (միջավայր)
3. Ներկայացնել ձայնի բնութագրիչները (բարձրություն, տեմբր)
4. Ինչպե՞ս է մարդն ընկալում ձայնը։

Կարճ անդրադարձից հետո տրվում է տնային հանձնարարությունը և դասն ավարտվում է։

Իմ աշխատանքն այս ընթացքում ուղղված է նպաստելու աշակերտների ուշադրության կենտրոնացմանը, ինքնուրույնության ձևավորմանը, աշխատանքների հերթականության կարգավորմանը, ուսուցչին մեթոդական, թեմատիկ նյութերի ձեռքբերման, մշակման և համակարգման գործում աջակցմանը։

Եզրակացություն

Այսպիսով՝ ցանկացած ուսումնական առարկայի, այդ թվում նաև կենսաբանության ուսուցման նպատակը անհատի ձևավորումն է, նրա որակների, հայացքների, սկզբունքների, վարքային չափանիշների ձևավորումն է համամարդկային նորմերին համապատասխան։ Դասավանդման տեխնիկան նպաստում է դեռահասների տարբեր հմտությունների, կարողությունների ընդլայմանն ու ուսուցման արդյունավետության բարձրացմանը։ Միջառարկայական կապերի իրագործումը օգնում է սովորողներին բնական երևույթների, նրանց փոխհարաբերությունների մասին ամբողջական

պատկերացում կազմել և այդ պատճառով էլ աշակերտների գիտելիքները գործնականում դառնում են ավելի արժեքավոր և կիրառելի, դա օգնում է սովորողներին մեկ առարկայից ստացած գիտելիքները օգտագործել մեկ այլ առարկայի ուսումնասիրման ընթացքում, հնարավորություն է տալիս օգտագործել գիտելիքները կոնկրետ իրադրություններում, առանձին հարցեր քննարկելիս ինչպես կրթական, այնպես էլ արտադպրոցական գործունեության մեջ և այլն: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ միջառարկայական կապերի ներդրումը կրթական գործընթացում բարելավում է կրթության որակը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ցանկացած դաս կարելի է ուղեկցել երաժշտությամբ, որը սովորողի մոտ առաջացնում է ներշնչանք դեպի արվեստը: Այս գործընթացների կազմակերպման գործում, հաշվի առնելով ուսուցչի ծանրաբեռնվածությունը, մեծ դերակատարում ունի ուսուցչի օգնականը, ով տարաբնույթ աջակցություն է ցուցաբերում և՛ ուսուցչին, և՛ աշակերտին: Որպես դասարանի օգնական՝ ուսուցչի օգնականը հնարավորություն է տալիս ուսուցիչներին առավելագույնս կենտրոնանալ սովորողներին ուսուցանելու և որպես դասավանդող ուսուցիչ իր առջև դրված խնդիրները հաղթահարելու:

Ուսուցչի օգնականի ամենօրյա աշխատանքները և պարտականությունները կարող են տարբեր լինել՝ կախված դասարանից, սովորողներից, դասի թեմայից, ուսուցչի կողմից պլանավորված աշխատանքներից և այլն, սակայն կան որոշ կետեր, որոնք արդյունավետ կրթական գործընթաց ապահովելու համար ընդհանրական են և կարևոր:

Ակնհայտ է, որ դասի թեմային, սովորողների կարիքներին և կրթական պահանջմունքներին համապատասխան ուսումնական նյութերի ընտրությունը, ինչպես նաև դասասենյակի գույքի դասավորվածության ապահովումը դասապրոցեսի բարձր արդյունավետության նախապայմաններից է: Բացի տեխնիկական աջակցություն ցուցաբերելուց՝ կարևոր է նաև ուսուցչի օգնականի դերը դասարանի ներսում առողջ համագործակցային և ընկերական հարաբերությունների ստեղծման և պահպանման, սովորողների սոցիալականացման և ինքնուրույն կյանքի նախապատրաստման գործընթացում: Ուսուցչի օգնականը բավականին շատ ժամանակ է անցկացնում դասարանի հետ ակտիվ գործունեություն պահանջող միջոցառումների անցկացման

դեպքում: Այդ իսկ պատճառով ինչպես ուսուցիչը, այնպես էլ ուսուցչի օգնականը լայն հնարավորություններ ունեն՝ նպաստելու սովորողների սոցիալական հմտությունների, տարբեր իրավիճակներում համապատասխան հույզեր և վարք դրսևորելու կարողությունների զարգացմանը: Ուսուցչի օգնականը կարևոր դեր ունի արդյունավետ կրթություն ապահովելու հարցում: Այդ դերը դպրոցում շատ տարբեր է. այն սկսվում է ուսուցչին աջակցելու գործընթացից՝ դասի պլանավորում, անհրաժեշտ խորհուրդներ, ինչպես նաև արտադասարանական աշխատանքներից՝ դասամիջոցներ, արտադպրոցական միջոցառումներ, ինչպիսիք են էքսկուրսիաները, արշավները, այցելությունները թանգարաններ, պատմական վայրեր և այլն: Պետք է միշտ հիշել, որ սովորողների կարողությունների, հմտությունների զարգացմանն ու կրթական գործընթացի բարելավմանը նպաստում է սերտ համագործակցությունը դպրոցի հետ առնչվող բոլոր օղակների միջև՝ ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ, մանկավարժահոգեբանական ծառայություններ տրամադրող մասնագետներ, ծնողներ, սովորողներ:

Օգտագործված գրականություն

1. Նեառական կրթության ռազմավարություններ դասագիրք, Երևան, Հայաստան, 249 էջ
2. «Ուսուցչի օգնականի ձեռնարկ» մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. Եր. : Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. , 2022. - 94 էջ
3. Сухомлинский, В. Н. О воспитании [Текст] / В. Н. Сухомлинский. – М. : Политическая литература, 1979.
4. https://blognews.am/
5. https://editprint.am
6. https://cyberleninka.ru/article/n/osobennosti-primeneniya-mezhpredmetnyh-svyazey-na-urokah-biologii/viewer
7. https://krtahartak.am
8. http://elar.uspu.ru
9. https://youtu.be/5lCRsLjMeso
10. https://youtu.be/M0ZUez6udnE
11. https://youtu.be/8kQZHYbZkLs
12. https://youtu.be/x0mqfNZI1VE

13. https://youtu.be/o9ALrc33TsU
14. https://youtu.be/sgMaykdYrF0
15. https://youtu.be/YV85iw1w8WM
16. https://youtu.be/9a4DnEWXMHM
17. https://youtu.be/6C8srmWXlys